

Յ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Նորին Արքայական Մեծաթիւն Իշխան Ֆայսալի ծննդեան բարերաստիկ առիթով, Ամմանի Արքայական Պալատին եւ Պատրիարքարանին միջեւ փոխանակուած են հետեւեալ հեռագիրները:

11 Հոկտեմբեր 1965

Ն. Վեհափառութիւն
Հիւսէյն Թագաւոր,
Ամման.

Ն. Ա. Մեծութիւն Իշխան Ֆայսալի ծննդեան տարեդարձի ուրախ առիթով, յամում մեր, Սրբոց Յակոբեանց Միաբանութեան եւ Յորդանանի Հայ Կաթողիկոսական Պատրիարքարանին կը ներկայացնեմք մեր շնորհաւորութիւնները, Ն. Ա. Մեծութիւն Իշխան Ֆայսալի մաղթելով շարունակական փառք եւ բարի յաջողութիւն Ձերդ Վեհափառութեան բարձր հովանիին ներքին:

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊՍ. ՏԵՐՏԵՐԵԱՆ
ՊԱՏՐԻԱՐԳ ՀԱՅ ԵՐՈՒՍԱԿԷՄԻ

14 Հոկտեմբեր 1965

Արքայական Պալատ,
Ամման.

Նորին Ամենապատուութիւն
Տ. Նզիշէ Ս. Արքեպս. Տէրտերեան,
Պատրիարք Հայ Երուսաղէմի.

Խորապէս շնորհակալ ենք Ն. Ա. Մեծութիւն Իշխան Ֆայսալի ծննդեան տարեդարձին առիթով Ձերդ Ամենապատուութեան յաճած հեռագրին եւ հոգ արտայայտուած ազնիւ մաղթանքներուն համար:

Հանձնեմք ընդունիլ Մեր յարգանքներն ու բարեմաղթութիւնները: Թող Աստուած Ձերի շնորհէ երկար ու երջանիկ կեանք մը:

ՀԻԻՍԷՅՆ

Նորին Վեհափառութիւն Հիւսէյն Արքայի ծննդեան ուրախ առիթով, Ամմանի Արքայական Պալատին եւ Պատրիարքարանին միջեւ փոխանակուած են հետեւեալ հեռագիրները:

13 Նոյեմբեր 1965

Ն. Վեհափառութիւն
Հիւսէյն Թագաւոր,
Ամման.

Ձերդ Վեհափառութեան ծննդեան տարեդարձին առիթով, յամում իմ, Սրբոց Յակոբեանց Միաբանութեան, Երուսաղէմի Հայ Պատրիարքարանին եւ Յորդանանի Հայ Կաթողիկոսական Կաթողիկոսական Պատրիարքարանին կը ներկայացնեմք մեր շնորհաւորութիւնները, եւ կ'աղօթեմք առ բարձրեալն Աստուած որ Ձերդ Վեհափառութեան շնորհէ երկար կեանք եւ տեսական փառք:

ՎԱՍՆ ԵՐՈՒՍԱԿԷՄԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐԳԻՆ
ՀԱՅՐԻԿ ԱՐՔԵՊՍ. ԱՍԼԱՆԵԱՆ

22 Նոյեմբեր 1965

Արքայական Պալատ,
Ամման.

Նորին Ամենապատուութիւն
Տ. Նզիշէ Ս. Արքեպս. Տէրտերեան,
Պատրիարք Հայ Երուսաղէմի.

Մեծապէս շնորհակալ ենք, Մեր տարեդարձին առիթով Ձերդ Ամենապատուութեան բարի շնորհաւորութիւններուն եւ ազնիւ բարեմաղթութիւններուն համար:

Ձերի կը մաղթենք տեսական երջանկութիւն, առողջութիւն եւ յաջողութիւն:

ՀԻԻՍԷՅՆ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգէն Ամենայն Հայոց Կաթողիկոսի դահակալութեան տասերորդ տարեդարձին առիթով, Պատրիարքական Փոխանորդ Գեղ. Տ. Հայրիկ Արքեպօ. Ասլանեան Հետեւեալ Հեռագիրը յղած է Ն. Ս. Օնութեան.

29 Հոկտ. 1965

Ն. Ս. Օ. Տ. Տ.

Վազգէն Առաքին,
Կաթողիկոս Ամենայն Հայոց,
Էջմիածին.

Ձերդ Վեհափառութեան գահակալութեան տասերորդ տարեդարձին բարերաւտիկ առիթով, մեր, Միաբանութեան եւ գաղութին անունով կը յայտնենք շնորհաւորութիւններ, Ձերդ Վեհափառութեան մագլցելով երկար եւ երջանիկ կեանք:

ՀԱՅՐԻԿ ԱՐՔԵՊՍ. ԱՍԼԱՆԵԱՆ

Ի պատասխան Վերոյիշեալ Հեռագրին, Ն. Ս. Օ. Տ. Վազգէն Վեհափառէն տապալած է Հետեւեալ պատասխան-ձեռակը.

Ս. Էջմիածին,
23 Նոյեմբեր 1965

Գերաշնորհ

Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս Ասլանեանին,
Լուսարարապետին Հայոց Ս. Նրուսաղէմի,
Ս. Նրուսաղէմ.

Ընծ սիրով կարգացիմք Ձեր շնորհաւորական հեռագիրը Մեր Գահակալութեան տասերորդ տարեդարձի առիթով: Ձեր բարի մագլցանքները քաղցրօրէն յուզեցին Մեր սիրտը, որի համար շնորհակալ ենք Ձեզ:

Իրեն Հայոց Հայրապետ Մեր տառնաւհայ գործունէութեան յրաւին նուիրած համդիտութիւնները եւ մասնաւոր նախապահ յուշարձանի բացումը Ս. Էջմիածնի մը-

ւիրական հողի վրայ, Մեր հոգիին համար համդիտացան անփոխարինելի մխիթարութիւններ:

Գոհութիւն Աստուծոյ Ամենակալին Մեր համեստ անձին ընծայուած այս շնորհներուց համար:

Թող միշտ ամշարժ աւ ծաղկեալ մ'այ մեր Սուրբ Եկեղեցին եւ սիրով միաբան՝ մեր հաւատուցեալ ժողովուրդը:

Սիրոյ ոգովմիւ եւ օրհնութեամբ՝

ՎԱԶԳԷՆ Ա.

ՆԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՍՏԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

Ս. Էջմիածնի ժէլ Ն. Ս. Օ. Տ. Վազգէն Առաքինի կողմէ կատարուած եպիսկոպոսական ձեռնադրութեան առիթով, Պատրիարքական Փոխանորդ Գեղ. Տ. Հայրիկ Արքեպօ. Ասլանեան Հետեւեալ Հեռագիրը յղած է Նորին Սուրբ Օնութեան.

6 Նոյեմբեր 1965

Ն. Ս. Օ. Տ. Տ.

Վազգէն Առաքին,
Կաթողիկոս Ամենայն Հայոց,
Էջմիածին.

Այս բարերաստիկ առիթով մեր եւ մեր Միաբանութեան կողմէ բերմ շնորհակալութիւններ կը յայտնենք Ձերդ Վեհափառութեան՝ որ հանեցաք մեր Միաբանութեան երկու անդամները Եպիսկոպոս ձեռնադրել: Կը խնդրենք որ բարեհաճիք մեր անկեղծ շնորհաւորութիւնները փոխանցել մեր ձեռնադրուած Յակոբ եւ Շահէ Եպիսկոպոսներուն: Թող Ամենակալաւոր Աստուած կազուց եւ անասան պահէ մեր Մայր Եկեղեցին եւ Ձերդ Վեհափառութեան պալտքով երկար եւ արդիւնաւոր կեանք:

ՀԱՅՐԻԿ ԱՐՔԵՊՍ. ԱՍԼԱՆԵԱՆ